GM CONSULT LLC

«ԱԼԱՇԿԵՐՏ» ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2025Թ.-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

ՋԻ ԷՄ ՔՈՆՍԱԼԹ ՍՊԸ
Աուդիտորական և խորհրդատվական ընկերություն
էլ.հասցե՝ consultgmllc@gmail.com, վեբ կայք՝ www.gmconsult.am, հեռ.՝ +37441451172

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԱԼԱՇԿԵՐՏ» ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ» ՀԿ-ի ղեկավարությանը

Պետական ռեգիստրի գրանցման վկայականի համար՝ **211.171.57441**
Իրավաբանական և գործունեության հասցեներ՝ **ՀՀ, ք,Երևան Դավթաշեն 2 թ 26/29**

ԿԱՐԾԻՔ

Մեր կողմից իրականացվել է «ԱԼԱՇԿԵՐՏ» ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ» ՀԿ -ի (Կազմակերպություն) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում 31.12.2025թ. դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Կազմակերպության՝ 31.12.2025թ. դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են Հավելված G-ով սահմանված հաշվապահական պահանջներին:

ԿԱՐԾԻՔԻ ՀԻՄՔԵՐ

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք անկախ ենք Կազմակերպություն՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝մեր կարծիքն արտահայտելու համար:

ԱՅԼ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Կազմակերպության 2024թ. Տարեկան ֆինանսական հաշվետվությունները ենթարկվել են աուդիտի «Աուդիտ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից և այն իր 14.04.2026թ. անկախ աուդիտորական եզրակացությամբ արտահայտվել է չձևափոխված կարծիք:

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆԵ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՂԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Կազմակերպության՝անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու (եթե կիրառելի է), ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Կազմակերպությունը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

ԱՈՒԴԻՏԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏԻ ՀԱՄԱՐ

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում՝խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցված կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝դրնաց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք պմասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝մեր կարծիքն

արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Կազմակերպության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարված հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Կազմակերպության անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Կազմակերպությունը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:

- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Ք. ԵՐԵՎԱՆ, 14.04.2026թ.

ՋԻ ԷՄ ՔՈՆՍԱԼԹ ՍՊԸ

Գլխավոր Տնօրեն՝ Գոհար Մարգարյան

Որակավորված աուդիտոր՝ Անահիտ Թադևոսյան

Բովանդակություն

1. ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 2
2. ՂԵԿԱՎԱՐ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ / ՏՆՕՐԵՆԻ ԶԵԿՈՒՅՑ 6
3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 7
4. ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 9
5. ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 11
6. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 12
7. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 14

Պետական ռեգիստրի գրանցման վկայականի համար՝ **211.171.57441**
Իրավաբանական և գործունեության հասցեներ՝ **ՀՀ, ք,Երևան Դավթաշեն 2 թ 26/29**

ՂԵԿԱՎԱՐ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ/ՏՆՕՐԵՆԻ ԶԵԿՈՒՅՑ

ՀՖՖ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ Ժ/Պ՝

Տիկին Ն. Աբրամյանին

14/04/2026

Հարգելի տիկին Աբրամյան,

«Ալաշկերտ» ֆուտբոլային ակումբը հաստատում է, որ

ա) ՀՖՖ-ին ներկայացված բոլոր փաստաթղթերը ամբողջական են, ճշգրիտ և համապատասխանում են սույն կանոնակարգի դրույթներին;
բ) տեղի չի ունեցել արտոնագրման դիմումին կամ արտոնագրային որևէ չափանիշին վերաբերող որևէ էական փոփոխություն կամ նման իրադարձություն;
գ) տեղի չեն ունեցել խոշոր տնտեսական նշանակություն ունեցող իրադարձություններ և չեն փոխվել պայմաններ, որոնք կարող են հակադարձ ազդեցություն ունենալ ակումբի ֆինանսական կարգավիճակի վրա՝ սկսած աուդիտ անցած նախորդ տարեկան հաշվետվությունների օրվանից:
դ) ակումբը և հաշվետու խմբում ընդգրկված ցանկացած մայր կազմակերպություն իր պարտատերերից չի փնտրում կամ չի ստացել պաշտպանություն՝ համաձայն օրենքների և կանոնակարգերի, արտոնագրման մրցաշրջանից 12 ամիս առաջ ընկած ժամանակահատվածում:

«Ալաշկերտ Ֆուտբոլային Ակումբ» ՀԿ-ի

Գլխավոր տնօրեն՝ Ա.Բալիբերդին

Պետական ռեգիստրի գրանցման վկայականի համար՝ **211.171.57441**
Իրավաբանական և գործունեության հասցեներ՝ **ՀՀ, ք,Երևան Դավթաշեն 2 թ 26/29**

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(Ներկայացված է հազար ՀՀ դրամներով)	**Ծանոթ.**	**2025թ.**	**2024թ.**
Ընթացիկ ակտիվներ			
Դրամական միջոցներ և համարժեքներ		15,014	13,062
Դեբիտորական պարտքեր խաղացողների տրանսֆերների գծով		-	-
Դեբիտորական պարտքեր խմբի/կապակցված կողմերի գծով	J	-	-
Այլ ընթացիկ դեբիտորական պարտքեր	6 J	114	-
Տրված կանխավճարներ			929
Տրված փոխառություններ կապակցված կողմերին		2,597,369	2,595,217
Պաշարներ			
Այլ ընթացիկ ակտիվներ			
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**2,612,497**	**2,609,208**
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	7E	-	2,464
Ոչ նյութական ակտիվներ - խաղացողներ	8 F/Հավե.լ 1 F	83,912	-
Ոչ նյութական ակտիվներ -այլ	8 F	-	-
Դեբիտորական պարտքեր խաղացողների տրանսֆերների գծով		-	-
Դեբիտորական պարտքեր խմբի/կապակցված կողմերի գծով		-	-
Այլ ոչ ընթացիկ դեբիտորական պարտքեր		-	-
Հետաձգված հարկային ակտիվներ		-	-
Ներդրումներ		-	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**83,912**	**2,464**
Ընդամենը ակտիվներ		**2,696,409**	**2,611,672**
Ընթացիկ պարտավորություններ			
Բանկային օվերդրաֆտներ և այլ վարկեր	I	-	-
Ստացված կանխավճարներ		6,200	-
Կրեդիտորական պարտքեր խաղացողների տրանսֆերների գծով	Հավել. 2	52,939	-
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և այլ կարճաժամկետ հատուցումների գծով	Հավել. 3	8,213	769
Կրեդիտորական պարտքեր սոցապ/հարկային մարմիններին	Հավել. 4	3,182	272
Այլ կրեդիտորական պարտքեր		1,870	5,619
Հաշվեգրված և հետաձգված եկամուտներ		-	-
Կարճաժամկետ պահուստներ		-	-
Եկամուտներին վերաբերող շնորհներ		4,067	
Այլ ընթացիկ պարտավորություններ		4,710	
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**81,181**	**6,660**

Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Բանկային և այլ վարկեր	I	-	-
Խմբից/կապակցված կողմերից ստացված փոխառություններ		-	-
Կրեդիտորական պարտքեր խաղացողների տրանսֆերների գծով	Հավել. 2	-	-
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և այլ հատուցումների գծով	Հավել. 3	-	-
Կրեդիտորական պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով	Հավել. 4	-	-
Այլ կրեդիտորական պարտքեր		-	-
Հաշվեգրված և հետաձգված եկամուտներ		-	-
Հետաձգված հարկային պարտավորություններ		-	-
Երկարաժամկետ պահուստներ	J	-	-
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ		-	-
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**-**	**-**
Ընդամենը պարտավորություններ		**81,181**	**6,660**
Զուտ ակտիվներ/(պարտավորություններ)		**2,615,228**	**2,605,012**
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական/կանոնադրական կապիտալ	K	-	-
Չբաշխված շահույթ	K	2,615,228	2,605,012
Պահուստներ			
Ընդամենը սեփական կապիտալ		**2,615,228**	**2,605,012**

Սույն ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Կազմակերպության ղեկավարության կողմից 14.04.2026թ., 14-25 էջերի ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

«Ալաշկերտ» ֆուտբոլային ակումբ» ՀԿ
Տնօրեն՝ Ալեքսեյ Բալիբերդին

Պետական ռեգիստրի գրանցման վկայականի համար՝ **211.171.57441**
Իրավաբանական և գործունեության հասցեներ՝ **ՀՀ, ք,Երևան Դավթաշեն 2 թ 26/29**

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(Ներկայացված է հազար ՀՀ դրամներով)	**Ծանոթ.**	**2025թ.**	**2024թ.**
Հասույթ			
Տոմսերի իրացում			
Հովանավորչություն և գովազդ	2B	4,051	15,125
Հեռարձակման իրավունքներ	B	-	-
Առևտրական	B	-	-
ՈՒԵՖԱ-ի աջակցության գումարներ	2B	181,400	108,428
Ֆուտբոլի ազգային մարմնից դրամաշնորհներ, նվիրատվություններ	2 B	11,454	-
Աջակցություններ/նվիրատվություններ կապակցված կողմերից	2 B	20,490	6,000
Այլ գործառնական եկամուտ	2 B	134	21,386
Ընդամենը հասույթ		**217,529**	**150,939**
Ծախսեր		-	-
Վաճառքի (նյութերի) ինքնարժեք		-	-
Աշխատավարձի գծով ծախսեր (խաղացողներ)	3 C	(46,375)	(38,007)
Աշխատավարձի գծով ծախսեր (այլ աշխատակիցներ)	3 C	(39,738)	(25,884)
Արձակուրդի պահուստ		(4,708)	-
Հիմնական միջոցների մաշվածություն	8 H	(2,464)	(1,038)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա (բացառությամբ խաղացողների գրանցման հետ կապված ծախսերի)	9 I	-	-
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում (բացառությամբ խաղացողների գրանցման հետ կապված ծախսերի)		-	-
Այլ գործառնական ծախսեր	4 D	(94,395)	(105,333)
Ընդամենը գործառնական ծախսեր (բացառությամբ խաղացողների գրանցման հետ կապված ծախսերի)		**(187,680)**	**(170,262)**
Գործառնական շահույթ (վնաս)		**29,849**	**(19,323)**
Խաղացողների գրանցման ձեռքբերում և օտարում		**-**	**-**
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա (խաղացողների գրանցում)		(14,514)	-
Ոչ նյութական ակտիվների արժեզրկում (խաղացողների գրանցում)		-	-
Խաղացողների մարզական փոխհատուցում		(1,160)	-
Գրանցման ձեռքբերմանն ուղղված ծախսեր (ներառյալ չկապիտալացված վճարներ գործակալներին/միջնորդներին և խաղացողների վարձակալության վճարներ)		(15,817)	(1,468)
Խաղացողների գրանցման օտարումներից եկամուտներ (ներառյալ վարձակալությունից եկամուտ)		595	1,960
Ընդամենը խաղացողների գրանցման ձեռքբերում և օտարում	Հավել. 1	**(30,896)**	**492**

Հիմնական միջոցների օտարումից օգուտ (վնաս)		-	-
Ոչ նյութական ակտիվների օտարումից օգուտ (վնաս)		-	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվների օտարումից օգուտ (վնաս)			
Ֆինանսական արդյունք			
Ֆինանսական եկամուտ		-	-
Ֆինանսական ծախսեր		-	-
Զուտ օգուտ (վնաս) փոխարժեքային տարբերությունից	5	11,263	(1,203)
Զուտ ֆինանսական եկամուտ (ծախսեր)		**11,263**	**(1,203)**
Այլ եկամուտներ (ոչ գործառնական)	D	-	-
Այլ ծախսեր (ոչ գործառնական)	D	-	-
Շահույթ (վնաս) մինչև հարկումը		**10,216**	**(20,034)**
Շահութահարկ			**-**
Տարվա զուտ շահույթ (վնաս)		**10,216**	**(20,034)**

Սույն ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Կազմակերպության ղեկավարության կողմից 14.04.2026թ., 14-25 էջերի ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

«Ալաշկերտ» ֆուտբոլային ակումբ» ՀԿ
Տնօրեն՝ Ալեքսեյ Բալիբերդին

Պետական ռեգիստրի գրանցման վկայականի համար՝ **211.171.57441**
Իրավաբանական և գործունեության հասցեներ՝ **ՀՀ, ք,Երևան Դավթաշեն 2 թ 26/29**

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(Ներկայացված է հազար ՀՀ դրամներով)	**Չբաշխված շահույթ**	**Ընդամենը**
Մնացորդ առ 01 հունվարի 2024թ.	**2,625,046**	**2,625,046**
Կանոնադրական կապիտալի ավելացում		-
Տարվա շահույթ (վնաս)	(20,034)	(20,034)
Մնացորդ առ 31 դեկտեմբերի 2024թ.	**2,605,012**	**2,605,012**
Կանոնադրական կապիտալի ավելացում	-	
Տարվա շահույթ (վնաս)	10,216	10,216
Մնացորդ առ 31 դեկտեմբերի 2025թ.	**2,615,228**	**2,615,228**

Սույն ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Կազմակերպության ղեկավարության կողմից 14.04.2026թ., 14-25 էջերի ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

«Ալաշկերտ» ֆուտբոլային ակումբ» ՀԿ
Տնօրեն՝ Ալեքսեյ Բալիբերդին

Պետական ռեգիստրի գրանցման վկայականի համար՝ **211.171.57441**
Իրավաբանական և գործունեության հասցեներ՝ **ՀՀ, ք,Երևան Դավթաշեն 2 թ 26/29**

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(Ներկայացված է հազար ՀՀ դրամներով)	**2025թ.**	**2024թ.**
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Գործառնական շահույթ	10,216	(20,034)
Ճշգրտումներ		
Մաշվածություն և ամորտիզացիա	16,978	1,038
Շնորհից եկամուտ	(454)	(3,321)
Ֆինանսական եկամուտ		
Ֆինանսական ծախս		
Փոխարժեքային տարբերություններ (օգուտ)/վնաս	(10,757)	1,203
Գործառնական վնաս նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	15,983	(21,114)
Պաշարների փոփոխություն		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	816	1,314
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	21,581	(7,665)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	38,380	(27,465)
Վճարված շահութահարկ		
Ստացված տոկոսավճարներ		
Վճարված տոկոսներ		
Դրամական միջոցների զուտ հոսք գործառնական գործունեությունից	38,380	(27,465)
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Դրամական միջոցներ խաղացողների գրանցման օտարումից	595	1,960
Վճարումներ խաղացողների գրանցումներ ձեռքբերելու նպատակով	(44,579)	(1,468)
Տրված փոխառություններ կապակցված կողմերին	7,283	25,967
Դրամական միջոցներ հիմնական միջոցների օտարումից		(225)
Վճարումներ հիմնական միջոցների ձեռքբերման դիմաց		
Այլ		
Ներդրումային գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	(36,701)	26,234
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից		
Դրամական միջոցներ փոխառություններից – բաժնետերեր և կապակցված կողմեր		
Փոխառությունների մարում – բաժնետերեր և կապակցված կողմեր		
Դրամական միջոցներ փոխառություններից – ֆինանսական կազմակերպություններ		

Փոխառությունների մարում – ֆինանսական կազմակերպություններ		
Դրամական միջոցներ սեփական/բաժնետիրական կապիտալում ներդրումներից		
Վճարված շահաբաժիններ		
Այլ		
Դրամական միջոցների զուտ հոսք ֆինանսական գործունեությունից	**-**	**-**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	**1,679**	**(1,231)**
Արտարժույթի փոխարժեքային ազդեցությունը դրամական միջոցների վրա	273	(1,203)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	13,062	15,496
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում	**15,014**	**13,062**

Սույն ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Կազմակերպության ղեկավարության կողմից 14.04.2026թ., 14-25 էջերի ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

«Ալաշկերտ» ֆուտբոլային ակումբ» ՀԿ
Տնօրեն՝ Ալեքսեյ Բալիբերդին

Պետական ռեգիստրի գրանցման վկայականի համար՝ **211.171.57441**
Իրավաբանական և գործունեության հասցեներ՝ **ՀՀ, ք,Երևան Դավթաշեն 2 թ 26/29**

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընդհանուր տեղեկություններ

- **Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն**

««Ալաշկերտ» ֆուտբոլային ակումբ» հասարակական կազմակերպությունը (այսուհետ «ՀԿ» կամ Կազմակերպություն) ՀՀ քաղաքացիների, օտարերկրյա պետությունների քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և իրավաբանական անձանց հասարակական միավորման տեսակ է, որն ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ: Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 2011թ. դեկտեմբերի 27-ին: Կազմակերպության գրանցման համարն է 211.171.57441: Կազմակերպության կանոնադրական նպատակներն են՝

- Նպաստել ֆուտբոլի զարգացմանը և մասսայականացմանը ՀՀ-ում,
- Մասնակցել ՀՀ-ում ֆուտբոլ մարզաձևում կազմակերպվող և անցկացվող սիրողական և կամ պրոֆեսիոնալ առաջնություններին.
- Նպաստել առողջ ապրելակերպին,
- Օժանդակել մարզիկների սոցիալական ապահովությանը և առողջության պահպանմանն ու զարգացմանը,
- Միջոցներ ձեռնարկել ֆուտբոլիստներին սպորտային ռեժիմով սնվելու հնարավորությունը ապահովելու ուղղությամբ,
- Կապեր հաստատել ինչպես ՀՀ, այնպես էլ՝ օտարերկրյա այլ մարզադպրոցների և/կամ ֆուտբոլային ակումբների հետ,
- Կազմակերպել սիրողական ֆուտբոլի առաջնություններ,
- Միջոցներ ձեռնարկել ֆուտբոլ մարզաձևի Հայաստանի Ազգային Հավաքականի համար սաներ նախապատրաստելու ուղղությամբ,
- Նպաստել երեխաների ֆուտբոլային կրթության մակարդակի բարձրացմանը,
- Նպաստել մարզչական գործունեության մասնագիտական մակարդակի բարձրացմանը,
- ՀՀ տարբեր շրջաններում՝ նպաստել ֆուտբոլով զբաղվող երեխաներին բարեկեցիկ մարզական պայմանների ապահովմանը,
- Նպաստել ՀՀ-ում պրոֆեսիոնալ ֆուտբոլի տեսական և գործնական կառավարման մակարդակի բարելավմանը,
- Կազմակերպել և անցկացնել ուսումնամարզական հավաքներ:

Կազմակերպության կառավարման մարմիններն են ընդհանուր ժողովը և գործադիր մարմինը՝ գլխավոր տնօրենը: Կազմակերպության՝ հերթական Ժողովը գումարվում է հինգ տարին մեկ անգամ: Գլխավոր տնօրենը որոշում է Ժողովի անցկացման օրը, ժամը և տեղը:

2025թ. Կազմակերպության աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 46 մարդ (2024թ. 49 մարդ): Կազմակերպության հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Դավթաշեն 2 թաղ. 26շ, բն 29

1. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

1.1. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի մեթոդի հիման վրա՝ անընդհատության սկզբունքով:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են ՀՀ դրամով, իսկ Ֆինանսական տեղեկատվությունը ցույց է տրված հազար դրամներով՝ առանց ստորակետից հետո տասնորդական նիշի:

1.2. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին համապարփակ հաշվետվությունում՝ նվազեցնելով հիմնական միջոցների սկզբնական կամ վերագնահատված արժեքը (բացառությամբ հողի և օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցների) օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում՝ կիրառելով գծային մեթոդը հետևյալ համամասնությամբ՝

Դասի անվանում	**Օգտ . ծառայություն**
Մեքենա-սարքավորումներ	1 տարի
Արտադրատնտեսական գույք, գործիքներ	1 տարի

Մինչև 50 հազար դրամ արժողությամբ հիմնական միջոցների օգտակար ծառայությունը սահմանվում է մինչև 1 տարի:

Ֆինանսական վարձակալությամբ ստացված ակտիվների գծով մաշվածությունը հաշվարկվում է նույն մեթոդաբանությամբ՝ օգտակար տնտեսական ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, իսկ երբ ժամկետները հարաբերականորեն կարճ են, կիրառվում են ֆինանսական վարձակալության պայմանագրով սահմանված ժամկետները:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և դրա հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է տարվա արդյունքում:

1.3. Ոչ ընթացիկ ոչ նյութական ակտիվներ – խաղացողներ

Տրանսֆերային և խաղացողների գրանցման ձեռքբերմանն ուղղված այլ բնորոշ ծախսերը կապիտալացվում են որպես ոչ ընթացիկ ոչ նյութական ակտիվներ: Այլ ծախսերը տարեկան հավասար մասնաբաժիններով ամբողջությամբ ամորտիզացվում են խաղացողների համապատասխան պայմանագրային ժամկետին զուգընթաց: Տվյալ ակումբի մանկապատանեկան թիմերից փոխադրվող խաղացողներին առնչվող ծախսերը կապիտալացման ենթակա չեն:

Եթե պայմանագրի ժամկետը վերանայվում է չամորտիզացված գումարը, ինչպես նաև պայմանագրային ժամկետների երկարաձգման առնչությամբ ծագած նոր ծախսերը, ամորտիզացվում են համաձայն նոր պայմանագրի:

Ցանկացած տրանֆերային վճար, որի իրականացումը պայմանավորված է մեկ կամ ավելի ապագա անորոշ դեպքերի արդյունքից, կապիտալացվում է, երբ հավանական է, որ այդ իրադարձությունը տեղի կունենա:

Խաղացողների գրանցումները արժեզրկման արդյունքում դուրս են գրվում, երբ դրանց հաշվեկշռային արժեքը գերազանցում է վաճառքի կամ օգտագործման փոխհատուցվող գումարը:

1.4. Հասույթ

Հասույթը կազմակերպության առօրյա գործունեությունից առաջացող տնտեսական օգուտների համախառն ներհոսքն է՝ բացառությամբ խաղացողների գրանցման վաճառքի դիմաց տրանսֆերային վճարներից և առնչվող հարկերից:

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով և ներկայացնում է շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում ակտիվի վաճառքի կամ ծառայության մատուցման դիմաց վճարվող գումար՝ առանց զեղչերի և համապատասխան հարկերի:

Տոմսերի իրացում/խաղային օրերի հասույթ

Խաղային օրերի հասույթը ճանաչվում է հաշվետու տարվա ընթացքում. Յուրաքանչյուր խաղային օրվա հասույթ պետք է ճանաչվի, միայն երբ խաղային հանդիպումն արդեն իսկ կայացել է: Խաղային օրվա հասույթը, որը ստացվել է որպես կանխավճար մինչև հաշվետու տարվա ավարտը, սակայն վերաբերում է հաջորդ մրցաշրջանին (օրինակ՝ տոմսերի սեզոնային վաճառք), պետք է ձևակերպվի որպես հետաձգված եկամուտ (հասույթ) և ճանաչվի խաղային հանդիպումների կայացմանը զուգընթաց:

Հովանավորչություն և գովազդ

Հովանավորչությունն ու գովազդն ընդգրկվում են ակումբի գլխավոր հովանավորին, այլ հովանավորների մարզադաշտի եզրագծային և ցուցադրվող գովազդը, ինչպես նաև ցանկացած այլ տեսակի հովանավորչություն և գովազդային գործունեություն:

Հեռարձակման իրավունքներ

Հեռարձակման իրավունքներից հասույթն իրենից ներկայկացնում է ԶԼՄ-ների հետ կնքված տնային պայմանագրերից ստացվող միջոցները: Հեռուստատեսային շուկայի ներկայացվածության հիման վրա բաշխվող, ինչպես նաև մասնակցության վճարները ճանաչվում են խաղային հանդիպումների կայացմանը

զուգընթաց: Ակումբի խաղային նվաճումներից մրցանակային գումարները ճանաչվում են ծ, երբ դրանց ստացումը դառնում է որոշակի:

Առևտրական հասույթ

Առևտրային հասույթը բաղկացած է մանրածախ իրացումներից, սնունդի և խմիչքի վաճառքից, համագումարների կազմակերպումի (ոչ խաղային օրերին), վիճակախաղերի կազմակերպումից և այլ կերպ չդասակարգված առևտրային հասույթից:

ՈՒԵՖԱ-ի համերաշխության և մրցանակային գումարներ

ՈՒԵՖԱ-ի մրցանակային գումարները ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերի մասնակցության դիմաց ստացվող միջոցներն են: Հեռուստատեսային շուկայի ներկայացվածության հիման վրա բաշխվող, ինչպես նաև մասնակցության վճարները ճանաչվում են խաղային հանդիպումների կայացմանը զուգընթաց: Ակումբի խաղային նվաճումներից մրցանակային գումարները ճանաչվում են, երբ դրանց ստացումը դառնում է որոշակի: ՈՒԵՖԱ համերաշխության վճարները պետք է ճանաչվեն, երբ ստացվելիք գումարը դառնում է որոշակի:

Այլ եկամուտներ

Այլ եկամուտներն ընդգրկում են նվիրաբերությունները, դրամաշնորհները, ցանկացած տեսակի արտասովոր գործառնական եկամուտները, ինչպես նաև նախորդ հինգ խմբերում չդասակարգված այլ եկամուտներ:

1.5. Առևտրական դեբիտորական պարտքեր

Դեբիտորական պարտքերը չափվում են սկզբնական արժեքով (սկզբնական հաշվում նշված գումարով), բացառությամբ այն դեպքերի, երբ զեղչման ազդեցությունը զգալի է: Այս դեպքում դեբիտորական պարտքը չափվում է զեղչված արժեքով: Տրված փոխառություններ Սկզբնական ճանաչման պահին անտոկոս և ցածր տոկոսադրույքով տրված ժամկետային փոխառության զեղչումից (իրական արժեքով չափումից) առաջացած զուտ արդյունքը (վնասը) ճանաչվում է.

- սեփական կապիտալում, եթե ֆինանսական ակտիվը մասնակիցների ու նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունների գծով է, և

- շահույթում կամ վնասում, եթե ֆինանսական ակտիվը այլ կողմերի գծով է: Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ Դրամական միջոցները դրամարկղում դրամական միջոցներն են և ցպահանջ ավանդները: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Որպեսզի ներդրումները որակվեն որպես դրամական միջոցների համարժեքներ, դրանք պետք է լինեն ազատ փոխարկելի՝ նախապես հայտնի դրամական գումարներով, և դրանց արժեքի փոփոխման ռիսկը պետք է լինի ոչ նշանակալի: Հետևաբար, ներդրումները սովորաբար դասվում են դրամական միջոցների համարժեքների շարքին միայն այն դեպքում, եթե դրանք ունեն մարման կարճ ժամկետ, օրինակ՝ ձեռքբերման օրվանից երեք ամիս, կամ ավելի քիչ: Բանկային օվերդրաֆտները, որոնք ենթակա են ցպահանջ մարման, կազմում են Կազմակերպության դրամական միջոցների կառավարման բաղկացուցիչ մասը և, որպես բաղադրիչ, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում ներառվում են դրամական միջոցներում և դրամական միջոցների համարժեքներում, իսկ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ պարտավորություններում:

1.6. Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Կազմակերպությանը մատուցել է ծառայություն, Կազմակերպությունը, աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որոնք ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչում է՝ ա) որպես պարտավորություն՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Կազմակերպությունը ճանաչում է այդ տարբերությունը որպես ակտիվ՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի, և բ) որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ ՖՀՄՍ-ներով պահանջվում կամ թույլատրվում է հատուցումների գումարը ներառել մեկ այլ ակտիվի արժեքի մեջ (օրինակ, պաշարների, հիմնական միջոցների դեպքում): Կազմակերպությունը փոխհատուցելի բացակայությունների ձևով աշխատակիցների հատուցումների ակնկալվող ծախսումները ճանաչում է՝

ա) կուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ՝ տարեկան արձակուրդը)՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքները ապագա փոխհատուցելի բացակայությունների նկատմամբ, և

բ) չկուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ՝ ժամանակավոր անաշխատունակությունը)՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում: Կազմակերպությունը կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները չափում է որպես լրացուցիչ գումար, որը Կազմակերպությունը ակնկալում է վճարել որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք: Ընդ որում այդ հաշվարկներում ներառվում է նաև պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասը:

1.7. **Շնորհներ**

Ճանաչում

Շնորհները ճանաչվում են, երբ կա հիմնավոր հավաստիացում, որ.

- Կազմակերպությունը բավարարելու է դրանց կցված պայմանները. և
- շնորհները ստացվելու են:

Ներկայացում

Շնորհները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են՝ որպես հետաձգված եկամուտ:

Հաշվառում

Շնորհները ճանաչվում են շահույթում կամ վնասում սիստեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջանների ընթացքում, երբ Կազմակերպությունը որպես ծախս է ճանաչում դրանց համապատասխան ծախսումները, որոնց փոխհատուցման համար նախատեսված են շնորհները: Շնորհը, որը ստացման ենթակա է դառնում՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որի նպատակն է Կազմակերպությանը տրամադրել անհետաձգելի ֆինանսական օգնություն՝ առանց դրա հետ կապված հետագա ծախսումների, ճանաչվում են շահույթում կամ վնասում այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ այն դառնում է ստացման ենթակա:

Վերադարձում

Շնորհը, որը դառնում է վերադարձման ենթակա, հաշվառվում է որպես հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխություն: Շնորհի վերադարձումը առաջին հերթին կատարվում է տվյալ շնորհի գծով չամորտիզացված հետաձգված կրեդիտային մնացորդի հաշվին: Այնքանով, որքանով վերադարձումը գերազանցում է այդպիսի հետաձգված կրեդիտային մնացորդը, կամ երբ հետաձգված կրեդիտային մնացորդ գոյություն չունի, վերադարձումը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում:

1.8. Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ

Ֆունկցիոնալ արժույթ

Ֆունկցիոնալ արժույթը որոշելիս Կազմակերպությունը հաշվի է առնում ստորև նշված գործոնները՝

ա) արժույթ՝

- որը հիմնականում ազդում է ապրանքների և ծառայությունների վաճառքի գների վրա (հաճախ այն արժույթը, որով իր ապրանքների և ծառայությունների վաճառքի գները սահմանվում և հաշվարկները կատարվում են). և
- այն երկրի արժույթը, որի մրցակցային գործոններն ու կանոններն են հիմնականում որոշում իր ապրանքների և ծառայությունների վաճառքի գները.

բ) արժույթ, որը հիմնականում ազդում է ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ աշխատուժի, նյութական և այլ ծախսումների վրա (նշվածը հաճախ այն արժույթն է, որով նման ծախսումները սահմանվում և կատարվում են): Կազմակերպության ֆուկցիոնալ արժույթը ՀՀ դրամն է:

Սկզբնական ճանաչում

Արտարժույթով գործառնությունը սկզբնապես ճանաչման պահին հաշվառվում է ֆունկցիոնալ արժույթով՝ արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով ֆունկցիոնալ արժույթի և արտարժույթի միջև գործառնության ամսաթվի դրությամբ սփոթ փոխանակման փոխարժեքը: Որպես սփոթ փոխանակման փոխարժեք ընդունվում է արժութային շուկայում ձևավորված արտարժույթների միջինփոխարժեքը:

Հաջորդող հաշվետու ժամանակաշրջանների վերջի դրությամբ տեղեկատվության ներկայացում Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջին՝

ա) արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով փակման փոխարժեքը.

բ) սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում (ներկայացվում) են գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքով և

գ) իրական արժեքով արժեքի որոշման օրվա փոխանակման փոխարժեքով:

Փոխարժեքային տարբերությունների ճանաչումը

Համաձայն ՀՀ Հարկային Օրենսգրքի 108 հոդվածի 7-րդ կետի Շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով Կազմակերպության համար եկամուտ չի համարվում՝ ակտիվների, այդ թվում՝ արտարժույթի,

արտարժույթով արտահայտված այլ ակտիվների, ինչպես նաև բանկային ոսկով և այլ թանկարժեք մետաղներով արտահայտված ակտիվների վերագնահատման դրական արդյունքը:

Համաձայն ՀՀ Հարկային Օրենսգրքի 112 հոդվածի 7-րդ կետի Շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով Կազմակերպության համար ծախս չի համարվում՝ ակտիվների, այդ թվում՝ արտարժույթի, արտարժույթով արտահայտված այլ ակտիվների, ինչպես նաև բանկային ոսկով և այլ թանկարժեք մետաղներով արտահայտված ակտիվների վերագնահատման բացասական արդյունքը:

1.9. Շահութահարկ

Ընթացիկ հարկ

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները (ակտիվները) չափվում են այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե (կփոխհատուցվի բյուջեից)՝ կիրառելով հարկերի դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Կազմակերպության շահույթ կամ վնասի, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի և սեփական կապիտալի հոդվածները ներկայացնում է՝ հանելով համապատասխան հարկային հետևանքները: Հաշվանցում Կազմակերպությունը ընթացիկ հարկային ակտիվները և ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝

ա) ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և՝

բ) մտադիր է՝ կամ հաշվարկն իրականացնել (ակտիվը կամ պարտավորությունը մարել) զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

1.10. Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություններ

Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխության հետևանքը, բացառությամբ ստորև շարադրվածի, ճանաչվում է առաջընթաց՝ արտացոլվելով շահույթի կամ վնասի մեջ՝

ա) փոփոխման ժամանակաշրջանում, եթե փոփոխությունն ազդում է միայն տվյալ ժամանակաշրջանի վրա, կամ

բ) փոփոխման ժամանակաշրջանում և հետագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունը երկուսի վրա էլ ազդում է: Այնքանով, որքանով հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունն առաջացնում է ակտիվների և պարտավորությունների փոփոխություն կամ առնչվում է սեփական կապիտալի որևէ հոդվածի հետ, այն ճանաչվում է համապատասխան ակտիվի, պարտավորության կամ սեփական կապիտալի հոդվածի հաշվեկշռային արժեքի ճշգրտման միջոցով՝ փոփոխության ժամանակաշրջանում: Այն դեպքերում, երբ դժվար է տարբերակել հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունից, այն դիտվում է որպես հաշվառման գնահատման փոփոխություն՝ համապատասխան բացահայտմամբ:

1.11. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունում փոփոխություններ

Կազմակերպությունը փոփոխում է հաշվապահական հաշվառման քաղաքականությունը միայն այն դեպքում, եթե այդ փոփոխությունը՝ ա) պահանջվում է որևէ ՖՀՄՍ-ով, կամ բ) հանգեցնում է ֆինանսական հաշվետվություններում Կազմակերպության ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի վրա գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների ազդեցության վերաբերյալ առավել արժանահավատ և տեղին (ռելևանտ) տեղեկատվության ներկայացմանը: Եթե Կազմակերպությունը հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառում է հետընթաց, ապա հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառում է նախորդող ժամանակաշրջանների համադրելի տեղեկատվության նկատմամբ՝ հետ գնալով այնքան ժամանակաշրջան, որքան քաղաքականության հետընթաց կիրառումը իրագործելի է:

Հետընթաց կիրառությունը նախորդող ժամանակաշրջանի նկատմամբ իրագործելի չէ, քանի դեռ հնարավոր չէ որոշել այդ ժամանակաշրջանի ֆինանսական վիճակի մասին հաշվետվության սկզբնական և վերջնական մնացորդների կուտակային հետևանքը: Ճշգրտման հանրագումարը, որը վերաբերում է ֆինանսական հաշվետվություններում ներկայացված ժամանակաշրջաններին նախորդող ժամանակաշրջաններին, վերագրվում է ամենավաղ ժամանակաշրջանում ներկայացված սեփական կապիտալի յուրաքանչյուր ազդեցություն կրած բաղադրիչի սկզբնական մնացորդին: Սովորաբար, ճշգրտումը վերագրվում է չբաշխված շահույթին: Այնուամենայնիվ, ճշգրտումը կարող է վերագրվել սեփական կապիտալի մեկ այլ բաղադրիչի (օրինակ՝ մեկ այլ ՖՀՄՍ-ի պահանջները բավարարելու նպատակով):

Երբ Կազմակերպության համար անիրագործելի է հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառել հետընթաց՝ բոլոր նախորդող ժամանակաշրջանների նկատմամբ նոր քաղաքականության կիրառման կուտակային հետևանքը որոշելու անկարողության պատճառով, ապա Կազմակերպությունը նոր քաղաքականությունը կիրառում է առաջընթաց՝ հնարավոր ամենավաղ ժամանակաշրջանից սկսած: Այդ դեպքում Կազմակերպությունը հաշվի չի առնում ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի՝ մինչ այդ ամսաթիվն առաջացող կուտակային ճշգրտման բաժինը:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություն թույլատրվում է, եթե նույնիսկ հնարավոր չէ այդ քաղաքականությունը առաջընթաց կիրառել ցանկացած նախորդող ժամանակաշրջանի համար:

1.12. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Կազմակերպությունը ճշգրտում է իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած ճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով: Հիմնադրամը չի ճշգրտում իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած չճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

2 B. Հասույթ

Հազար ՀՀ դրամ	**2025թ.**	**2024թ.**
ՈՒԵՖԱ-ից աջակցության գումարներ	181,400	108,428
Սուբսիդիաներ, նվիրատվություններ և այլ գումարներ ՀՖՖ-ի կողմից	11454	6,000
Աջակցություններ/նվիրատվություններ կապակցված կողմերից	20,490	
Հովանավորչություն, գովազդ	4,051	15,125
Այլ	134	21,387
Ընդամենը հասույթ	**217,529**	**150,939**

3 C. Աշխատակիցների վարձատրության ծախսեր

Հազար ՀՀ դրամ	**2025թ.**	**2024թ.**
Խաղացողներ		
Աշխատավարձ	(34,208)	(28,742)
Հարկային/սոցապ հատկացումներ	(12,167)	(9,265)
Ընդամենը	**(46,375)**	**(38,007)**
Այլ աշխատակիցներ		
Աշխատավարձ	(29,590)	(19,417)
Հարկային/սոցապ հատկացումներ	(10,148)	(6,467)
Ընդամենը	**(39,738)**	**(25,884)**
Ընդամենը Աշխատակիցների վարձատրության ծախսեր	**(86,113)**	**(63,891)**

4 D. Այլ գործառնական ծախսեր

Հազար ՀՀ դրամ	**2025թ.**	**2024թ.**
Ուսումնամարզական հավաքների և խաղերի կազմակերպման գծով ծախսեր	75,475	79,982
Մարզահագուստի և սպորտային պարագաների գծով ծախսեր	1,979	15,645
Խաղերի հետ կապված տուգանքներ	186	1,030
Ֆուտբոլիստերի բուժօգնության ծախսեր	658	1,425
Աուդիտորական և խորհրդատվական	10,929	4,100
Հեռահաղորդակցության ծախսեր	412	91
Բանկային ծախսեր	655	143
Այլ ծախսեր	4,101	2,917
Ընդամենը Այլ գործառնական ծախսեր	**94,395**	**105,334**

5 Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից օգուտ (վնաս)

Հազար ՀՀ դրամ	**2025թ.**	**2024թ.**
Զուտ օգուտ (վնաս) փոխարժեքային տարբերությունից	**11,263**	**(1,203)**
Ընդամենը Ընդամենը այլ ոչ գործառնական ծախսեր	**11,263**	**(1,203)**

6 Այլ դեբիտորական պարտքեր

(Ներկայացված է հազար ՀՀ դրամներով)	2025թ.	2024թ.
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	107	-
Դեբիտորական պարտք աշխատավարձի գծով	7	-
Ընդամենը այլ դեբիտորական պարտքեր	**114**	**-**

7 Ե. Ոչ ընթացիկ նյութական ակտիվներ – Հիմնական միջոցներ

(Ներկայացված է հազար ՀՀ դրամներով)	Մեքենաներ և սարքավորումներ	Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ	Ընդամենը
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	2,679	24,641	27,320
Ավելացում		225	225
Օտարում			
Վերագնահատումից աճ			
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,679	24,866	27,545
Ավելացում			
Օտարում			
Վերագնահատումից աճ			
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,679	24,866	27,545
Կուտակված մաշվածություն և արժեզրկում			
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	2,679	21,364	24,043
Հիմնական միջոցների մաշվածություն		1,038	1,038
Օտարված հիմնական միջոցների կուտակված մաշվածություն			
Հիմնական միջոցների արժեզրկում			
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,679	22,402	25,081
Հիմնական միջոցների մաշվածություն		2,464	2,464
Օտարված հիմնական միջոցների կուտակված մաշվածություն			
Հիմնական միջոցների արժեզրկում			
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,679	24,866	27,545
Հաշվեկշռային արժեք			
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	2,464	2,464
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-	-

8 F. Ոչ ընթացիկ ոչ նյութական ակտիվներ

(Ներկայացված է հազար ՀՀ դրամներով)	Խաղացողների գրանցումներ	Այլ	Ընդամենը
2024թ. հունվարի 1-ի դրությամբ		2,215	2,215
Ավելացում			
Օտարում			
Վերագնահատումից աճ			
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2,215	2,215
Ավելացում	98,426		98,426
Օտարում			
Վերագնահատումից աճ			
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	98,426	2,215	100,641
Կուտակված մաշվածություն և արժեզրկում			
2024թ. հունվարի 1-ի դրությամբ		2,215	2,215
Ոչ ընթացիկ ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա			
Օտարված ոչ ընթացիկ ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա			
Ոչ ընթացիկ ոչ նյութական ակտիվների արժեզրկում			
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2,215	2,215
Ոչ ընթացիկ ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	14,514		14,514
Օտարված ոչ ընթացիկ ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա			
Ոչ ընթացիկ ոչ նյութական ակտիվների արժեզրկում			
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	14,514	2,215	16,729
Հաշվեկշռային արժեք			
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-	-
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	83,912	-	83,912

9 Գործարքներ փոխկապակցված կողմերի հետ

Համաձայն «Փոխկապակցված կողմերի բացահայտում» ՀՀՄՍ 24–ի կողմերը համարվում են փոխկապակցված, եթե մի կողմը հնարավորություն ունի վերահսկել մյուս կողմին կամ էական ազդեցություն ունենալ մյուս կողմի ֆինանսական և գործառնական որոշումների կայացման վրա: Սույն ֆինանսական հաշվետվությունների տեսանկյունից, փոխկապակցված կողմերը ներառում են Կազմակերպության ղեկավարության անդամներին և նրանց հետ փոխկապակցված անձանց, ինչպես նաև այլ անձանց և կազմակերպություններին, որոնք փոխկապակցված են կամ համապատասխանորեն վերահսկվում են նրանց կողմից:

Կազմակերպության կապակցված կողմերն են՝

- **Կազմակերպության մասնակիցներ՝**

Կազմակերպության վերջնական վերահսկող է համարվում Բագրատ Նավոյանը:

Ներկայացվող հաշվետվությունների առումով կապակցված կողմերն են նաև համատեղ հսկողության տակ գտնվող կազմակերպությունները, տնօրենը, ինչպես նաև նաև նրանց հետ կապակցված անձինք:

Փոխկապակցված անձի անվանումը	**Փոխկապակցվածության բնույթը**
Բագրատ Նավոյան	Նախագահ
Նաիրի մանկապատանեկան մարզադպրոց ՍՊԸ	Բագրատ Նավոյանը հանդիսանում է ՍՊԸ-ի 100 տոկոս բաժնեմասի բաժնետերը
Բագրատ Տուր ՍՊԸ	Բագրատ Նավոյանը հանդիսանում է ՍՊԸ-ի 100 տոկոս բաժնեմասի բաժնետերը

Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործարքներ կապակցված կողմերի հետ: Կապակցված կողմերի հետ իրականացված գործարքները հետևյալն են.

- **Գործարքներ վերջնական հսկողի հետ**

Հազար դրամ	**Մնացորդը 31.12.2024**	**Մուտք**	**Ելք**	**Մնացորդը 31.12.2025**
Տրված փոխառություններ - Բագրատ Նավոյան	2,595,217	203,018	200,866	2,597,369

- **Գործարքներ համատեղ հսկողության տակ գտնվող կազմակերպությունների հետ**

Հազար դրամ	**Մնացորդը 31.12.2024**	**Մուտք**	**Ելք**	**Մնացորդը 31.12.2025**
Տրված կանխավճար - Բագրատ Տուր ՍՊԸ	929	-	929	-

- **Գործարքներ ղեկավարության հետ**

Հազար դրամ	**Մնացորդը 31.12.2024**	**Մուտք**	**Ելք**	**Մնացորդը 31.12.2025**
Աշխատավարձ -Գլխավոր տնօրեն՝ Բալիբերդին Ալեքսեյ	-	1,422,762	1,213,062	209,700
Աշխատավարձ -Գործադիր տնօրեն՝ Նավոյան Լիպարիտ	-	1,114,120	1,114,120	-
Աշխատավարձ- Փոխնախագահ՝ Մկրտչյան Տիգրան	-	1,064,631	939,631	125,000
Ստացած փոխառություններ - Գլխավոր տնօրեն Բալիբերդին Ալեքսեյ	-	230,000	230,000	-
Շնորհ - Փոխնախագահ՝ Մկրտչյան Տիգրան	-	24,557,000	20,490,000	4,067,000

«Ալաշկերտ» ֆուտբոլային ակումբ» ՀԿ
Տնօրեն՝ Ալեքսեյ Բալիբերդին